

308

3Ա-47

№ 1

№ 1 ՊԱՏԱՆՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ Պ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՍԵՐԻՈ

ՔԱՂԱՔ ՅԵՎ ԳՅՈՒՂ

(Կազմված ըստ Յուրույաժսի)

Թարգմ. Գ. ԳՐԻԳ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1926

09.07.2013

12465

308

3m-47

uy

1 DEC 2009

25 SEP 2006

№ 1 ՊԱՏԱՆՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՐԻՈ

ՔԱՂԱՔ ՅԵՎ ԳՅՈՒՂ

(Կազմված ըստ Յարոսլավսկու)

Թարգմ. Գ. ԳՐԻԳ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1926

ՔԱՂԱՔ ՅԵՎ ԳՅՈՒՂ.

ԻՆՉ ԲԱՆ Ե ՔԱՂԱՔԸ ՅԵՎ ԻՆՉՈՎ Ե ՆԱ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ
ԳՅՈՒՂԻՅ.

Ք ա ղ ա Ք . Յերբ խոսք ե լինում քաղաքի մասին, անմիջապես մեր աչքի առջև պատկերանում են բազմաթիվ, իրար վրա կուտակված հսկայական տներ, մայթեր, խճուղիներ, փողոցների ամբողջ լերկարու թյամբ լապտերներ, խանութներ ու կրպակներ, պետական հիմնարկություններ, հյուրանոցներ, յերկաթուղային կայարաններ, նավահանգիստներ, տրամվայներ, թատրոններ, ավտոներ, ջրմուղ և այլն: Այդպես են, որինակ, Մոսկվան, Լենինգրադը, Կիևը, Ուֆասան և այլն. ել չենք խոսում այնպիսի հսկայական քաղաքների մասին, ինչպիսին Լոնդոնն ե Անգլիայում, ուր 7 միլիոն մարդ ե ապրում, կամ Նյու-Յորկը—Ամերիկայում: Կան մի շարք ինքնուրույն պետություններ, վորոնց բնակչության թիվն ավելի քիչ ե, քան այս քաղաքներից մեկինը:

Ամերիկայի գլխավոր քաղաք Նյու-Յորկը 5 միլիոնից ավելի բնակչություն ունի: Յեվրոպայում, որինակ՝ Գերմանիայի մայրաքաղաք Բերլինը՝ 2 միլ. բնակչություն ունի, իսկ Ֆրանսիայի մայրաքաղաք Պարիզը՝ մոտ 3 միլիոն:

Գ յ ու ղ ը . Իսկ յերբ խոսում ենք գյուղի մասին, իսկույն մեր աչքի առջև պարզ ու վորոշ պատկերանում ե նրա ընդհանուր տեսքը: Ահա փայտից ու քարից շինված տնակները իրենց մեծ բակերով, գոմերն ու մարագները, խոտի ու աթաբի դեզերը, առուներն ու ջրաղացները, կանաչ, ծաղկառատ, անծայր դաշտերը, անտառներն ու արոտները:

Քաղաքում. Մեծ քաղաքում մարդիկ ամբողջ ուր մեծ-մեծ խմբերով շարժվում են, պտտվում ու աղմկում. փորձում են ավտոներն ու տրամվայները, սլանում են կառքերն ու ձիերը, անցնում են գործերը, այս ու այն կողմն են անցնում մանրավաճառները, վաղղում են լրագրավաճառները՝ բարձր աղաղակելով վերջին նորություններն ու լրագրերի անունները: Այգիներից ու ճաշարաններից լսվում է յերգ ու նվագ. ամեն տեղ շողշողում են գույնզգույն ցուցանակները, աֆիշաներն ու պլակատները:

Նույնիսկ զիշերը քաղաքի կյանքը չի ընդհատվում, և ելեկտրական լայտերների պայծառ լուսի տակ գրեթե ցերեկվա պես փողոցներում շարունակվում է նույն կենդանի և աղմկալի կյանքը:

Գյուղում. Մինչդեռ գյուղում սովորական աշխատանքային օրերի խաղաղ անդորրության մեջ լսվում է միայն հավերի կոկոսը, աքաղաղների ծուղրուղուն և յերբեմն ել շների հաշոցը: Դաշտային աշխատանքների ժամանակ գյուղում վոչվոջ չի մնում (բացի ծերերն ու յերեխաները): Միայն վաղ առավոտներն են գյուղի փողոցները լցվում մարդկային խմբերով, վորոնք անցնում են արորներ, փոցխ և զանազան գործիքներ տանելով (նայած ինչպիսի աշխատանքի յեն գնում): Ապա յերևում են վոչխարի ու կովերի հոտերը, լսվում է բայուն ու բառաչ. անասունները դոփում են գետինը ու իրար հրմշտում, շրմփում է հովվի մորակն ու մահակը, ու կանչ ու աղմուկով հոտերը հեռանում են գյուղից, հետո տիրում է սովորական անդորրությունն ու լուսթյունը:

Ամբողջ ուր տեղ այդ միակերպ խաղաղությունը խանգարվում է միայն յերեկոյան, յերբ գյուղի փողոցները լցվում են դաշտից վերադարձող մարդկանցով ու անասուններով: Դեռ մութը չընկած գյուղացիք ուտում են իրենց իրիկնահացը (ընթրիք) և պառկում քնելու: Նորից խաղաղությունը գրկում է գյուղին. լուռ է, մութ. ինչ-վոր հեռավոր խրճիթում շողշողում է գյուղի վերջին ճրագը. նա յել շուտով հանգչում է:

Գյուղն արդեն քնած է—խավարի ու լուսթյան մեջ: Միայն մեկ-մեկ լսվում է շների հատուկենտ հաշոցը և անցուղարձ անող պահապանի վոտնաձայնը:

Մեզ մոտ շատ հաճախ քաղաք են կոչվում այնպիսի բնակավայրերը, վորոնք վոչնչով չեն տարբերվում մեծ գյուղերից և, ընդհակառակը, գյուղ է կոչվում այնպիսին, վորը վոչնչով չի տարբերվում վորեւ գավառական քաղաքից և շատ անգամ նրանից ել մեծ է լինում թե իր բնակիչների թվով և թե իր տների քանակով. որինակ, Արմավիր գյուղը Հյուսիսային Կովկասում և Լենինական քաղաքը մեզանում և այլն:

Քաղաքի յեվ Ուրեմն ինչպես վորոշել, թե վորն է քաղաքը գյուղի սահմանը և վորը՝ գյուղը: Վորպեսզի գտնենք այդ սահմանը, հարկավոր է մարդկային այդ բնակավայրերը համեմատել վոչ թե ըստ արտաքինի, այլ պետք է ճիշտ վորոշել, թե նրանցից յուրաքանչյուրը ինչով ապրում և ինչով է կանգուն: Կասկածից դուրս է, վոր գյուղում ամեն բան հիմնված է հողի մշակութային—յերկրագործութային վրա: Հողագործությունն է այնտեղ վորոշում ազգաբնակչության կյանքի կարգն ու կանոնը և ցույց տալիս այն սահմանը, ուր կարող են աճել շներն ու գյուղերը: Յեթե մի բոլոր յենթադրենք, վոր Լոնդոնը իր 7 միլիոն բնակչությամբ զբաղվում է գյուղական տնտեսությամբ (յերկրագործությամբ), այն ժամանակ իրոք մի հետաքրքիր պատկեր կստանանք: Յենթադրենք, վոր յուրաքանչյուր բնակչին ընկել է մեկ դեսիատին հող. այն ժամանակ ընդհանուր թվից հանելով յերեխաներին, ծերերին և անդամալույծներին, այնուամենայնիվ քաղաքը պետք է ունենա 6—7 միլիոն դեսիատին տարածությամբ մի հողամաս:

Սա այնպիսի մի հսկա տարածություն կկազմի, վոր լոնդոնցին իր հողամասը կարող է հասնել փոխադրական զանազան միջոցներով. նրանցից մեկը հեշտությամբ կարող է իր հողամասը հասնել վոտքով, մյուսը հարկադրված կլինի ձիով գնալ, յերբորդն իր հողամասը կարող է գնալ միայն յերկաթուղով. քսկ չորրորդը, տեղի հեռավորության պատճառով, ուղի-չուղի,

դաշտային աշխատանքների ժամանակ պիտի իր հողամասը տեղափոխվի, վորովհետև վերջինս Լոնդոնից այնքան հեռու կընկնի, վոր միայն այնտեղ գնալ-գալը ահագին ժամանակ կխլի: Բացի դրանից՝ քաղաքի տեղը՝ իր բազմահարկ ու իրար սեղմված տներով քաղաքի հսկայական բնակչության հետ համեմատած, — այնքան փոքր է, վոր ամբողջ այդ ժողովրդի բազմությունն իր գյուղատնտեսական գործիքներով, անասուններով, գոմերով և այլն — չի կարող տեղավորվել գոյություն ունեցող բնակարաններում:

Այդ դժվարություններն ավելի պարզ ու ակնհայտնի կլինեն մանավանդ այնպիսի քաղաքներում, ինչպիսիք ամերիկականն են, ուր քաղաքատեղը չափազանց փոքրիկ հողամաս է զբաղում, ինչպես, որինակ, Նյու-Յորկը, ուր 5 միլիոնից ավելի բնակչություն է ապրում: Այս վերջին հանգամանքն ստիպել է Նյու-յորկի բնակիչներին բետոնից ու յերկաթից քսանյերեսունհարկանի հատուկ տներ շինել, վորոնք այնտեղ կոչվում են «յերկինք բերդներ» և «ամպ կտրողներ»:

Այդ տները հսկայական բարձրություն ունեն. նրանց կից յոթհարկանի տները թզուկների յեն նմանում:

Նյու Յորկում 10-ը, 15, 17 և 20-հարկանի տները հարյուրներով են հաշվում, իսկ վերջերս շինվել են 40, 48 և 50 հարկանի — 600 մետր բարձրության տներ. կնշանակի, նրանց բարձրությունն անցնում է $1\frac{1}{2}$ կիլոմետրից:

Նման շինություններ կառուցում են նախ ազատ տարածություն չլինելու պատճառով, և յերկրորդ, վոր չեն ցանկանում անհրաժեշտ ու հարկավոր հիմնարկություններն ու ձեռնարկությունները ցրել:

Այդպիսի վիթխարի տներում տեղավորվում են 1—2 հազար խանութներ, գրասենյակներ և հիմնարկություններ: Միայն մեկ տան բոլոր ձեռնարկությունների ծառայողների թիվը 10 000-ի յե հասնում: Իսկ բարձրացնող մեքենաները, վորոնք փոխարինում են սանդուղքներին, որեկան բարձրացնում և իջեցնում են 30 հազարից ավելի մարդ: Շնորհիվ այն հանգամանքի, վոր նման տների դռները շատ հաճախակի յեն բացու-

խուփ լինում, ամերիկական ինժեներները նրանց փակցրել են հատուկ հարմարություն մեքենաներ, վորոնք շարժի յեն դրվում դռների բացուխուփով և տալիս են ելեկտրական հոսանք, վորով և լուսավորում են այդ յերկաթ-բետոնի տուն-հսկան:

Պարզ է, ուրեմն, վոր մեծ քաղաքի ամբողջ բնակչությունը չի կարող հողի մշակություն պարապել, այլ կամա-ակամա պետք է ընտրի մի այլ զբաղմունք: Գյուղացիական տնտեսությունը, ճիշտ դրան հակառակ, չի սիրում աշխատավորների խիստ կուտակում միևնույն տեղում. և յեթե վորևե գյուղի բնակչության թիվը մեծանում է, այն ժամանակ գյուղացիներն ստիպված են կամ գաղթել մի այլ շրջան կամ պարապել կողմնակի զբաղմունքներով (արհեստներով): Այդպիսով գյուղերի մոտ առաջանում են փոքրիկ շենքեր, իսկ գյուղատնտեսական կենտրոններին մոտ — արվարձաններ: Ճիշտ է, ինչպես ասվեց՝ կան և 30 հազար բնակիչ ունեցող գյուղեր, բայց իսկապես դրանք այլևս գյուղեր չեն, այլ փոքրիկ քաղաքներ, վորովհետև նրանց բնակչության մեծագույն մասն այլևս գյուղատնտեսությունը չի զբաղվում:

Այդպիսի գյուղերում լինում են բազմաթիվ առևտրականներ, խանութներ ու կրպակներ, ինչպես և շոգեաղաց, մահուղի կամ ապակու գործարան և այլն: Այնտեղ ապրում են նաև բանվորներ, ծառայողներ, կան և պիտական հիմնարկություններ, դպրոցներ և այլն և այլն:

Մի խոսքով՝ նման մեծ գյուղը — կես քաղաք է, կես գյուղ: Այդպես են նաև բազմաթիվ գավառական քաղաքներ, վորոնք մեծ մասամբ նման են մեծ գյուղերի:

Առևտրապետ Իսկական քաղաքը կանգուն է վոչ թե հողագործազառում. ծությունը, այլ առևտրով ու արդյունաբերությունը: Այն բոլորը, ինչ վոր քաղաքին մատակարարում են գյուղերը, շենքերը և գավառական փոքրիկ քաղաքները, քաղաքը վերամշակման է յենթարկում իր գործարաններում, ամբարում է պահեստներում, բաշխում է խանութներին, առևտուր է անում ոտարերկրյա պետությունների հետ և վերջա-

պես վաճառուս ե գյուղին մեքենաներ, նպարեղեն, մանու-
ֆակտուրա (ճոթեղեն) և այլն:

Իհարկե, յերբեմն գյուղն ել, բացի հողագործությունից,
պարապում ե նաև զանազան իրերի ու առարկաների արտա-
դրությամբ, որինակ՝ կոշիկեղեն, հագուստեղեն, ընտանեկան
պիտուկներ, լծասարք և այլն. սակայն այս բոլորը գյուղացին
շինում ե այն դեպքում միայն, յերբ անհրաժեշտ ե իրեն և իր
տնտեսությանը:

Իսկ քաղաքն արտադրում ե ամեն տեսակի ապրանքներ
հսկայական քանակությամբ, բայց վոչ թե իր, այլ վաճառա-
նոցների ու շուկաների համար, մի խոսքով՝ նրանց համար,
վորոնք ցանկանան փողով գնել այդ ապրանքները:

Սրանից հետևում ե, վոր գյուղն ամեն ինչ պատրաստում
ե իր համար, իր սեփական կարիքների համար և գուրս ե հա-
նում միայն իր ցորենի, վուշի, կանեփի, կաշու, կաթի և ձվի
մնացորդն ու ավելցուկը:

Հ ո ղ ա յ ի 6 Իսկ քաղաքը պատրաստելով գյուղի ու քաղաքի
օճեսուրճուհ. տնտեսության համար անհրաժեշտ առարկաներ,
որինակ՝ մանուֆակտուրա, մեքենաներ, ամանեղեն և այլն,
ինկատի ունի վոչ թե իր կարիքներն, այլ մեծ մասամբ հաշ-
վի յե առնում վաճառանոցների ու շուկաների պահանջները,
վորպեսզի իր արտադրած մթերքները վեր ածե հնչուն մե-
տաղի: Այսպիսով քաղաքն ապրում ե փողային տնտեսությամբ:
Նա փողի միջոցով առնում ե, ծախում, ապրանքներ ուղար-
կում աշխարհի չորս կողմը, փողով ե վճարում աշխատանքը
և փողի ոգնությամբ ե կապվում գյուղի հետ՝ ստեղծելով գյու-
ղական տնտեսության և քաղաքային արդյունաբերության մի-
ջև ապրանքափոխանակումն:

Այդ պատճառով քաղաքներում, բացի գործարաններից,
զավոդներից, խանութներից ու կրպակներից, կան նաև դրա-
մատներ (բանկ) և բորսաներ (բիրժա): Դրամատների ու բոր-
սաների միջոցով ե կատարվում քաղաքի դրամական ամբողջ
շրջանառությունը. նրանք են վարկ բաց թողնում, դրամական
փոխադրումներ կատարում, գանձումներ ու խնայողություն-

ներն ընդունում և զանազան հիմնարկություններին, ձեռնար-
կություններին ու մասնավոր մարդկանց հատուկ հաշիվներ
բացում:

Պարզելով քաղաքի եյությունը, մատնանշեցինք գյուղի և
քաղաքի տարբերությունը թե նրանց արտաքին տեսքի, թե
նրանց բնակչության վարած կյանքի և թե նրանց զբաղմունք-
ների տեսակետից: Գլխավոր տարբերությունն այն ե, վոր գյու-
ղը ամբողջապես կախված ե հողագործությունից և հիմնված ե
նրա վրա, իսկ քաղաքը, ընդհակառակը, առևտրի և արդյունա-
բերության վրա:

Բայց քաղաքի և գյուղի կյանքի պայմանների տարբերու-
թյամբ հանդերձ մենք շատ պարզ նկատում ենք, վոր նրանք
չափազանց սեղմ կապված են իրար հետ դրամական ընդհա-
նուր շրջանառությամբ և ապրանքափոխանակության անհրա-
ժեշտությամբ:

Ուրիշ խոսքով՝ այսօր քաղաքը առանց գյուղի յեվ գյուղն
առանց քաղաքի ապրել չի կարող:

ՇԵՆԵՐԻ, ԳՅՈՒՂԵՐԻ ՅԵՎ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՌԱՋԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

Ինչպես առա- Շատ վաղ ժամանակներում, յերբ մարդիկ պա-
շացավ գյուղը. բապում եյին վորսորդությամբ, ձկնորսությամբ
կամ իրենց անասունների հետ թափառում եյին տեղից-տեղ
(յավ արոտատեղ գտնելու համար), վոչ միայն քաղաքներ չկա-
յին, այլ և գյուղեր:

Այն ժամանակ մարդիկ մտածում եյին միայն մի բանի
մասին, այն ե՝ ինչ անել, վորտեղ պատսպարվել գիշերները,
վորպեսզի վայրենի զազաններն ու թունավոր ոձերը չհարձակ-
վեն նրանց վրա. ցերեկները նրանք հոգում եյին միայն ան-
ձրեից և կարկտից պաշտպանվելու մասին:

Դրա համար բավական եր շինել մի ժամանակավոր վրան
(ղազա), վորը և հեշտությամբ կարելի յեր թողնել ու գնալ
շատ ու շատ հեռու՝ նոր կայան վորոնելու ու նոր վրան զարկել:

Բայց յերբ մարդը հարկադրված յեղավ թողնել այդ կիսա-

վայրենի կյանքն ու գբաղվել յերկրագործությամբ, նա ավելի և ավելի կապվեց իրեն կերակրող հողին: Նա սկսեց գնահատել այդ հողի վրա թափած իր աշխատանքը, դարձավ ընտրած վայրի մշտական բնակիչը և բնականաբար սկսեց մտածել իր բնակարանի հարմարությունների մասին: Ժամանակի ընթացքում առաջացավ նաև շտեմարաններ ու մառան ունենալու պահանջ, վորովհետև թռչունները, մկները և անձրևները փչացնում էին դաշտի բերքը:

Հարկավոր եր նաև իր լծկաններին պաշտպանել վայրի գազանների հարձակումներից, այդ պատճառով ահա մարդը շինում է գոմեր ու ախոռներ: Յեվ վորովհետև մարդուն և իր կենդանիներին անհրաժեշտ եր ջուր, այդ պատճառով նա իր բնակության համար ընտրեց գետերի և լճերի ափերը:

Այսպիսով կամաց-կամաց առաջացան գյուղերը, քանի վոր մարդիկ այն ժամանակ ապրում էին տոհմերով ու ընտանիքներով, իսկ ընտանիքները հսկմը շատ-շատ ելին. ընտանիքի մեջ մտնում էին ամբողջ ազգականները, վոր կառավարում եր տոհմապետը:

Նման տնտեսական շենքերը ժամանակի ընթացքում մեծանում էին շնորհիվ բնակչության աճեցողության և ամուսնությունների. այդ տեսակետից վերջիններս բավականին խոշոր գեր էին խաղում, վորովհետև շատ հաճախ ամուսնությունների միջոցով տեղական տնտեսություններին միանում էին այլ հեռավոր ընտանիքներ:

Իհնչպես առաջացավ վաճառ- Պատահում եր և ալսպես. իրար կտրող ճանապարհների հանգույցում, վորտեղից բավական շատ ապրանքներ էին անց կացնում, առաջացավ վաճառանոցը:

Հանգստի ու գաղարի համար այդտեղ էին կանգ առնում վաճառականները, ծանոթանում էին միմյանց և կնքելով առևտրական գործառնություն, պայմանավորվում էին մեկ ամսից կամ մեկ տարուց հետո կրկին նույն տեղում հանդիպել: Ժամանակի ընթացքում նման գործառնությունների թիվն ավելանում եր. վաճառականներն արդեն սովորություն դարձրին

այդտեղ կատարել իրենց գործերը. իսկ ուրիշները տեղեկանալով, վոր այնտեղ կարելի է վորևե բան առնել կամ ծախել, աշխատում էին վորևե կերպ իրենց գցել այնտեղ, վորպեսզի առնողների կամ ծախողների հետ տեսնվեն: Տարեցտարի ավելի ու ավելի շատ մարդ եր հաճախում. մոտիկ գյուղերն սկսեցին իրենց հացը, միսը, կաթը, յուղը և այլ մթերքները բերել այդպիսի առևտրավայր և վաճառել յեկող-գնացողներին:

Հետագայում առևտրի մեծանալու հետ գանազան մարդիկ սկսեցին այնտեղ մշտական բնակություն հաստատել, վորովհետև այնտեղ կարող էին իրենց գոյության պահպանության համար աշխատանք գտնել, և այսպիսի նախկին անմարդարնակ ճանապարհների հանգույցում առաջացավ փոքրիկ շեն:

Նման շենքեր, գրեթե նման պատճառներից առաջացան և առաջանում են այնտեղ, ուր յերկու կամ մի քանի նավարկելի գետեր հանդիպում են միմյանց, ինչպես և ծովափերում, ծոցերում, նավահանգիստներում, ուր առևտրական նավերի հարմար կանգնելու հարմարություններ կան:

Գետերի, լճերի և ծովերի ափերին նման շենքեր առաջացան վոչ միայն առևտրի պատճառով, այլ և ձկնորսության հետևանքով. նրանք այդպես ել կոչվել և կոչվում են—ձկնորսական շենքեր. որինակ՝ ներկայիս Ռիբինսկը՝ Վոլգա գետի վրա կամ կամա գետի վրայի ձկնորսական արվարձանը:

Նման շենքերի բնակիչները հողագործությամբ կամ չեն պարապում, կամ չեթե պարապում են, դա մասնակի բնույթ ե կրում:

Իհնչպես առաջացավ առևտուր. Սկզբնական շրջանում մարդկային հասարակության մեջ տնտեսությունը փակ եր, բնական, այսինքն գյուղերի ու շենքերի բնակիչներն ամեն ինչ պատրաստում էին իրենք և բացառապես իրենց համարու, բացի բնության թանգագին պարգևների ավելորդից, վոչ մի բանով փոխանակություն չէին անում (որ աղ, կայծքար, հրաքար և այլն):

Այդպիսի տնտեսության բոլոր անդամներն արտադրում էին միատեսակ մթերքներ. ինչ վոր ուներ մեկը, նույնը ուներ և մյուսը. այդ պատճառով ել համայնքի անդամների

միջև—ներսում մթերքների փոխանակության վոչ մի կարիք չեր զգացվում:

Բայց վորքան մեծանում եր ազգաբնակչության թիվը, վորքան նորանոր կատարելություններ մտնում նրանց տընտեսական կյանքի մեջ, այնքան ավելի կարիք եր զգացվում գործիքների պատրաստությամբ զբաղվելու: Գործիքների և զենքերի պահանջն առաջ բերեց վարպետ-մասնագետներ: Այսպիսով գյուղացիության մեջ առաջ յեկան այլ զբաղմունքներ, վորոնք արգեն անմիջապես հողի հետ չեյին կապված:

Հողի վրա ստեղծված աշխատանքի այս բաժանումը, դրա հետևանքով՝ աշխատանքի արտադրականության աճումը, մի քանիսների ձեռքով հասարակական հավելյալ մթերքների յուրացումը ի հաշիվ մյուսների—առաջ բերին հասարակության մեջ դասակարգային բաժանում, այլ և այն, վոր տարբեր տնտեսություններ սկսեցին տարբեր առարկաներ և մթերքներ արտադրել:

Ուրիշ խոսքով՝ վորեւե դարձնի կամ կոշկակարի տնտեսությունը ի հաշիվ իր արտադրածի, առանձին գոյություն ունենալ չեր կարող: Շարունակ կոշիկներ կամ մանգաղներ պատրաստելով, այդ վարպետները ժամանակ չեյին ունենա հողագործությամբ զբաղվելու:

Բայց չե՞ վոր նրանք ել հացի կարիք ունեյին: Գյուղացին ել իր հերթին շարունակ յերկրագործությամբ զբաղվելով, այնքան ժամանակ չեր կարող ունենալ (ինչպես պետք ե), վոր սովորի լավ կոշիկներ ու մանգաղներ պատրաստելու արհեստները:

Մինչդեռ մեկը ի հաշիվ մանգաղի և կոշիկ կարող եր վորոշ քանակությամբ հաց ստանալ, իսկ մյուսը հացի վորոշ քանակության դիմաց կարող եր մանգաղներ, կոշիկներ ստանալ կամ ընդհանրապես այն, ինչ վոր անհրաժեշտ ե իրեն մյուս վարպետների պատրաստած իրերից: Արտադրված հավելյալ մթերքների այս փոխանակությունը դարձնում ե վերջիններիս ապրանք: Մթերքների այս ձևի ապրանքի վերածվելը յուրաքանչյուր մարդկային շենում—դառնում ե ապագա փոխանակա-

կան տնտեսության, միաժամանակ քաղաքների առաջանալու առաջին սաղմն ու պատճառը:

Պատահում եր և այնպես, վոր բազմաթիվ շեներ, շնորհիվ ազգաբնակչության աճման, կամ սակավահողության և կամ այլ պատճառների, հարկադրված եյին լինում ավելի շատ պարապել արհեստներով, քան հողագործությամբ: Պարզ ե, վոր նրանք շատ իրեր ու մթերքներ պատրաստելով, պետք ե փոխանակության համար նոր վայրեր վորոնեյին, քանի վոր իրենց շրջանում բոլոր իրերը չեյին կարող փոխանակել: Նման շեների ավելի ճարպիկ ու նախաձեռնող անդամներն սկսեցին իրենց ապրանքները տանել ուրիշ շեներ և այնտեղ, ուր ապրանքների փոխանակելու համար մեծ ժողովուրդ եր հավաքվում, այնտեղ ել առաջանում եյին վաճառանոցներ ու շուկաներ:

Ինչպես վերևը նկատեցինք, դա տեղի յեր ունենում ճանապարհների հանգույցներում կամ մեծ գետերի միացման կետերում, ուր ժողովրդի մեծ բազմություն եր անցուղարձ առնում: Ավելի հարմար և հաճելի վայրերում առաջանում եյին և տոնավաճառներ:

Տոնավաճառները մշտական չեյին լինում, այլ առաջանում եյին տարվա վորոշ ժամանակներին, որինակ՝ դաշտային աշխատանքներից առաջ և հետո կամ ձմեռը, վորովհետեւ գյուղացիությունն ամեն ժամանակ չի կարող թողնել իր դաշտը:

Կամաց-կամաց նման փոխանակությունների ընթացքում մշակվեց փոխանակության միավորը, վորը դարձավ բոլոր ապրանքների արժեքաչափը:

Մի տեղում դրա դերը կատարում եր, որինակ, անասունի գլուխը, մի այլ տեղ մեկ փութ ցորենը, մի յերրորդ տեղ թանգազին մորթին և այլն: Հետագայում նման միավորներ դարձան և վոսկու ու արծաթի կտորները. ազնիվ մետաղների այդ կտորները հաշվում եյին կշռով. հետագայում միայն նրանցից կտրեցին վորոշ մեծության ու կշռի հնչուն դրամներ, և այդպիսով վոսկին և արծաթը դարձան փող ու դուրս քշեցին հրապարակից մինչ այդ յեղածները:

Եւրոպէս եւ առաջին Փոխանակական տնտեսութեան հետագա զարգացել բաղաձայն. գացման հետ սկսում են զարգանալ քաղաքները՝ սաղմերը, վորոնք շնորհիվ արհեստների ու աշխատանքի բաժանման, արդեն առաջացել ելին շենքերով: Քաղաքներն ամենից առաջ սկսեցին առաջանալ աշտեղ, ուր մեծ շուկաներ կային. և վորքան բազմանում ելին շուկաները և հաճախակի դառնում տոնավաճառները, այնքան ել արագորեն շենքերը վեր ելին ածվում քաղաքների: Փողի յերևալուն հետ առաջացավ կանոնավոր առևտուրը հատկապէս այնտեղ, ուր արհեստավորների պատրաստած իրերի ավելի մեծ պահանջ կար, այդ պատճառով ել վերջիններս շուկաներին և տոնավաճառներին ավելի մոտ բնակութիւն հաստատեցին:

Այսպիսով քաղաքը բանի գնաց մեծացավ, գյուղատնտեսութեամբ պարապողների թիվն ավելի ու ավելի պակասեց, մինչև վոր մնացած միջանի գյուղացիներն ել վերջնականապէս թողեցին հողի մշակութիւնը և դարձան քաղաքացիներ: Հետագայում նման քաղաքներում հարստացած առևտրականները կամաց-կամաց չեղած բանվորներին ու արհեստավորներին սկսեցին կապել իրենց հետ ու կախման վիճակի մեջ պահել, վորովհետև իրենք ելին միակ միջնորդները գյուղացիների և արհեստավոր-վարպետների միջև: Վաճառականները փողով գնում ելին արհեստավորներից նրանց պատրաստած իրերը և պահում իրենց պահեստներում: Նույն բանը չեր կարող անել արհեստավորը, քանի վոր հետագա աշխատանքի համար նյութ գնելու և ընտանիքը կերակրելու համար նա փող պիտի ունենար: Այդ փողը ձեռք բերելու համար նա պետք է անմիջապէս, առանց սպասելու իր պատրաստած իրերը ծախեր: Իսկ վաճառականը ալ պայմաններում եր գտնվում. նա հարուստ եր, փողը շատ. արհեստավորից գնում եր նրա աշխատանքի արդունքը, դնում եր պահեստում և սպասում այնքան, վոր կարելի յեր լինում ավելի մեծ շահով ծախել ապրանքը: Գյուղացու վիճակը, ինչպէս և այժմ, ամբողջապէս բերքից եր կախված. նա գրեթե իր արտադրած մթերքների տերը չեր դառնում: Շատ անգամ նրան հարկավոր եր և վարկ և վճար

րաժաժի յերկարում, մի բան, վոր խեղճ արհեստավորը նրան տալ չեր կարող. իսկ վաճառականը կարող եր և տալիս եր, դրա դիմաց վերցնելով տոկոսներ, վորով ավելի յեր հարստանում ու բազմապատկում իր ունեցած կապիտալը:

Շողեշարժի գյուղացի հետ քաղաքներում յերևացին իսկական ֆաբրիկաներ ու գործարաններ. այն ժամանակ արհեստավորների բանը վատացավ: Նրանցից շատերն ուղեւորներ զեյլին, վորպէս ուճիկ ստացող բանվորներ պետք է մտնելին գործարան և պրոլետարներ դառնային:

Այսպիսով ստեղծվեց կապիտալիստական արդյունաբերական քաղաքը, վորը բոլորովին գյուղին նման չեր, վորի մասին մենք արդեն խոսել ենք: Արհեստավորներից հետո քաղաքին յենթարկվեց նաև գյուղը, վորովհետև գյուղացին քաղաքից դուրս վոչ մի տեղ չեր կարող ծախել իր արտադրած մթերքները և դրա փոխարեն ստանալ իրեն անհրաժեշտ գործարանային ապրանքներ:

Այդ ժամանակ քաղաքն անմբողջապէս հիմնված եր փողային տնտեսութեան վրա և առանց առևտրի գոյութիւն ունենալ չեր կարող:

Արդյունաբերական յուրաքանչյուր անկում, դեպի վատը առաջացած յուրաքանչյուր փոփոխութիւն վոչ միայն կանգնեցնում եր նրա առաջնադասումը, այլ և կործանիչ ազդեցութիւն եր ունենում և շատ անգամ վտանգում նրա գոյութիւնը:

Քաղաքի, նրա ծագման ու զարգացման մասին այս բոլոր ասածներից կարելի յե յեզրակացնել, վոր քաղաքը ծնվում և զարգանում է վորոշ որենքների համաձայն, ճիշտ այնպէս, ինչպէս առհասարակ մարդկային հասարակութիւնը: Ինչպէս վոր գյուղատնտեսական պայմանների հետևանքով գյուղի աճման ու զարգացման համար գոյութիւն ունի վորոշ սահման, այնպէս ել քաղաքների, նրանց քանակի և մեծութեան համար գոյութիւն ունի վորոշ սահման: Քաղաքների զարգացման այդ սահմանը կախված է այս կամ այն յերկրի արդյունաբերութեան զարգացումից և նրա վորակից:

Յեթե մենք բոլոր յերկրները համեմատենք միմյանց հետ,

կտեսնենք, վոր ամենամեծ քաղաքները մեծ մասամբ գտնվում են խոշոր արդյունաբերական յերկրներում, որինակ՝ Ամերիկայում, Անգլիայում, Բելգիայում, Գերմանիայում: Գյուղատնտեսական յերկրներում նրանց թիվը քիչ է, իսկ այնպիսի ժողովուրդներ, վորոնք թափառական կյանք են վարում, ինչպես մեր կիրգիզները, սամոյեդները, բյուրդերը և այլն, քաղաքներ բոլորովին չունեն:

Այս թափառաշրջիկները գյուղեր անգամ չունեն. նրանք բավականաճում են ժամանակավոր շենքերով, ինչպես կիրգիզները, և յուրաքանչյուր քոչին իրենց յուրաքանչյուր մի կայանից տեղափոխում են մի նոր կայան:

Մեր ամբողջ յերկիրը, իհարկե, ավելի գյուղատնտեսական յերկիր է, քան արդյունաբերական, ուստի գերակշռում է գյուղը, քան թե քաղաքը:

(Ըստ Յազվիցկու)

ՔԱՂԱՔԸ ՅԵՎ ԳՅՈՒԴԸ ԱՅԺՄ.

Քաղաքն առանց Ամենքի համար պարզ է, վոր քաղաքի բան-գյուղի յեվ գյուղը առանց քաղաքի յեվ կարող գոյություն ունենալ. Ամենքի համար պարզ է, վոր քաղաքի բան-վոր դասակարգը և գյուղական տնտեսությանը զբաղվող գյուղացին ներկա հասարակության մեջ կազմում են յերկու առանձին դասակարգեր: Բայց հաճախ միանգամայն սխալ ձևով են դնում այդ յերկու դասակարգերի փոխհարաբերության հարցը: Որինակ՝ հարց են տալիս. — վորն է կարևորը, գյուղը թե քաղաքը, կամ թե՝ գյուղը առանց քաղաքի կարող է կառավարվել, ապրել, իսկ քաղաքն առանց գյուղի՝ չի կարող: Յեվ յեթե ինչպես հարկն է մտածենք այդ մասին, կատանանք հետևյալը. — քաղաքն առանց գյուղի չի կարող ձեռք բերել գյուղատնտեսական մթերքներ, որինակ՝ հաց, վառելիք, փայտ և այլն, այսինքն նա վորպես գործարանային-արդյունաբերական կենտրոն գոյություն ունենալ չի կարող, յեթե գյուղից հարկավոր մթերքներ չկրեն քաղաք. այդ մասին վեճ չկա: Իհարկե, յեթե պայմաններն այդպես դասավորվեյին, և քաղաքին վիճակվեր յերկար ժամանակ առանց գյուղի

ապրել, այն ժամանակ քաղաքը կստեղծեր իր՝ մերձքաղաքային գյուղատնտեսությունը: Այսինքն՝ քաղաքների շուրջը կըստեղծվեյին գյուղական տնտեսություններ, քաղաքային բան-վորության մի մասը կզբաղվեր հատկապես գյուղատնտեսությամբ, վորպեսզի հում մթերքներ տար քաղաքին: Քաղաքային կոնվենտի ժամանակ, փոխադրական միջոցների քայքայման հետևանքով, գործարանային բանվորությունը բավականին ծանր դրություն մեջ ընկավ — գետնախնձոր և գյուղատնտեսական այլ մթերքներ ձեռք բերելու խնդրում, և մենք տեսանք, թե ինչպես քաղաքի շրջակայքում բազմացան բան-ջարանոցները, ինչպես միջանի գործարանա-արդյունաբերական շենքեր շրջապատվեցին դաշտերով, բանջարանոցներով ու ցանքսերով:

Միջանի գործարանա-արդյունաբերական կենտրոններ, վորոնք առաջ ամեն ինչ գնում էյին, այժմ արդեն ապրում են ի հաշիվ իրենց սեփական դաշտերի ու բանջարանոցների, որինակ՝ Իվանովո-Վոզնեսենսկը:

Մյուս կողմից՝ ինչ է նշանակում, թե գյուղն առանց քաղաքի կարող է ապրել. դա նշանակում է, վոր գյուղացին պետք է ապրի առանց մեխի, ապակու, սապոնի (ոճառ), առանց քաղաքային արդյունաբերության գործվածքների, առանց գյուղատնտեսական մեքենաների յեվ ուրիշ այլ յեվ այլ գործիքների: Նրա ինվենտարը (գործիքներն ու գյուղատնտեսական կարասին) կամաց-կամաց կմաշվեր, իր սալը պետք է մի կերպ շիներ փայտերով ու տախտակներով, նրա բոլոր շենքերը պետք է փչանային և վերջը քանդվեյին, գյուղացին պետք է միջանի դար իջներ իր զարգացման մակարդակից:

Առանց յերկաթուղային յեվ շոգենավային հաղորդակցության, առանց հեռագրի յեվ փոստի, առանց լրագրի, առանց գիտության ու տեխնիկայի առաջխաղացման, առանց գյուղատնտեսական մթերքների վաճառման — գյուղացիությունը շատ հեշտությամբ կդառնար վորեմի իմպերիալիստական պետության ավարը յեվ հեշտությամբ ել կենթարկվեր իր ուժեղ հարեվանին, յեթե ինքնապաշտպանության համար գործարաններն ու

Ֆարքերիկաները գեները չարտադրեցին: Յեղաններով ու կացիններով չես կարող գնալ ներկայիս իմպերիալիստական պետություն թյան թնդանոթների ու գնդացիքների դեմ, յեվ վերջապես՝ ախար այդ գյուղական գործիքներն ել քաղաքում են պատրաստում այժմ:

Ուրեմն այն խոսակցությունները, թե գյուղը կարող ե պարեւ առանց քաղաքի, իսկ քաղաքն առանց գյուղի — միանգամայն անհիմն են:

Մեր ժողովրդական տնտեսությունը կարող ե զարգանալ միայն գյուղի յեվ քաղաքի միջեվ ստեղծված մոտիկ շփման յեվ փոխազդեցության պայմաններում, յերբ քաղաքի յեվ գյուղի մեջ գոյություն կունենա մթերքների մշտական, անընդհատ, կազմակերպված յեվ ծրագրված փոխանակություն:

Մինչև համաշխարհային պատերազմը գյուղացիական տնտեսությունը շուկա յեր հանում մոտավորապես մեկ միլիարդ 260 միլիոն փութ հացահատիկ: Այս հացի կեսից ավելին արտահանման եր գնում:

Ուրեմն, քաղաքը ե մեր արդյունաբերությունը հացից պատրաստելով զանազան տեսակի մթերքներ, կլանում եյին մոտ 600 միլիոն փութ հացահատիկ:

Գյուղը շուկա յեր հանում մոտ 150 միլիոն փութ միս, 160 միլիոն փ. արևածաղկի, վուշի ե կանեփի սերմեր, 30 միլիոն փ. վուշի թելեր, վորի կեսն արտասահման եր գնում, 14 միլիոն փ. մորթիներ, 8 միլ. փ. բուրդ ե բազմաթիվ ուրիշ տեսակի մթերքներ: Յեթե գյուղացիական տնտեսության այս բոլոր մթերքները, վորոնք մինչ պատերազմը քաղաքի շուկան եյին հանվում, դրամի վերածենք, կստանանք 2 միլիարդ ո. վոսկով, վորից 700 միլիոնի հում նյութ արտահանվում եր արտասահման:

Այսպիսով, յեթե մինչպատերազմյան գյուղացիական տնտեսության ամբողջ յեկամուտը հաշվենք 6 միլիարդ ո. վոսկով, ապա գյուղատնտեսական մթերքների այդ ամբողջ քանակի մի յերրորդից ավելին գնում եր քաղաք, իսկ մնացածն սպառվում եր գյուղացիական տնտեսության ներսում:

Իմպերիալիստական ե քաղաքացիական կռիվների ժամանակ գյուղացիական տնտեսության ամբողջ յեկամուտը կրճատվեց: Համեմատական չափով կրճատվեց նաև քաղաք մտնող մթերքների չափը: 1920 ե 21 թվականներին գյուղը ծախել ե վորպես պարենուրք տվել ե քաղաքին 870 միլ. ո. (վոսկով) մթերք: Դա կազմում ե ամբողջ գյուղատնտեսական մթերքների մի հինգերորդ մասը:

Նշանակում ե՝ գյուղատնտեսական մթերքներ գյուղը քաղաքին յերկու անգամ քիչ ե տվել, քան առաջ:

Քաղաքային Մինչև համաշխարհային պատերազմը քաղաքային արդյունաբերությունն իր արտադրած 2 միլիարդ 100 միլիոն ուռլուլայն սպառման առարկաներից (մեխ, ոճառ, ամանեղեն, ապակի ե այլն) գյուղին տվել ե մոտ մեկ միլիարդ 400 միլիոն ուռլուլայն:

Մինչև պատերազմը քաղաքը տվել ե գյուղին իր արտադրած լայն սպառման մթերքների ամբողջ յերկու յերրորդը: Բացի դրանից՝ քաղաքից գյուղ են մտել գյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ, հանքային պարարտացման մթերքներ ե այլն, մոտ 40 միլիոն ո., այլ գործարանա-արդյունաբերական իրեր մոտ 300 միլիոն ուռլուլայն: Այսպիսով ամբողջ ազգաբնակչության համար պատրաստված արդյունաբերական մթերքներից գյուղացիությունը մինչ պատերազմյան շրջանում ստանում եր մեկ միլիարդ յոթ հարյուր քառասուն միլիոն ուռլուլայն: Սրա վրա պետք ե ավելացնել քաղաքային արդյունաբերության ե այն մթերքները, վորոնք գյուղացիությունը ձեռք եր բերում զանազան տնայնագործական, կոյմակի ե այլ աշխատանքների միջոցով:

Իմպերիալիստական ե քաղաքացիական կռիվի ժամանակ, մանավանդ 1919 — 1921 թվականներին, քաղաքը գյուղին շատ քիչ քան տվեց, 1922 թվին գյուղացիությունն ստացավ ընդամենը 320 միլիոն ուռլուլայն քաղաքային արդյունաբերության մթերքներ, այսինքն՝ նախապատերազմյան շրջանից վեց անգամ պակաս: 1923 թվին գյուղ ուղղված ապրանքների քանակն աչքի ընկնող չափով մեծացավ ե միքանի ապրանքների նկատմամբ նույնիսկ հասավ նախապատերազմյան նորմային: Այժմ կա

րելի չե ասել, վոր գյուղատնտեսական և քաղաքային արդյունաբերութեան մթերքների միջև ստեղծվում է կանոնավոր շրջանառութիւն և փոխանակութիւն: Այդ տեսակետից մենք վերադառնում ենք նախապատերազմյան նորմային: Մեր ամբողջ աշխատանքը պետք է լինի, վոր գյուղին տանք ավելի շատ յեւ ավելի արժան, քան տրվում էր նախապատերազմյան շրջանում, վոր գյուղական սպառողին ազատենք մասնավոր ստեղծութեանի նանկերից, յեւ գյուղատնտեսական յեւ քաղաքային արդյունաբերութեան մթերքները փոխանակվելին իրենց արժողութեամբ հավասար: Լրացուցիչ հավելումը պետք է լինի այն քան, վոր բաժարտի հասարակութեանն անհրաժեշտ հասարակական հիմնարկութիւնների ծախքերը, որինսկ' դպրոց, հիվանդանոց, փոստ, յերկաթուղի յեւ այլն Պետք է հասնել դրան: Դժվար է, բայց կ'հասնենք, յեթ եւ միահամուռ կերպով աշխատենք այդ ուղղութեամբ:

Քաղաքի յեւ գյուղի միջեւ յեղած սեռնական կապը ինչ ձեւով հաս-
նասել.

Այնտեղ, ուր գոյութիւն ունի փողային փոխանակական տնտեսութիւն, և ուր արդյունաբերութեան մթերքները գնում են ազատ շուկայ, այնտեղ գյուղի հետ տնտեսական կապ հաստատելու խնդիրը կ'լինի մոտավորապես հետեւյալը. գյուղին ի՞նչ ձեւով արագ արժան յեւ լավ մատակարարել տոբյակ պիտանի գործարանային

արդյունաբերական մթերքները: Դրա համար բուրժուական հասարակութեան մեջ գլխավոր միջոցը մասնավոր առևտուրն է, խոշոր կապիտալիստական պետութիւնների մեջ, ինչպես ասում են, առևտուրը մենաշնորհված է, այսինքն վորեւ խոշոր գործարանատեր, մենակ, կամ ընկերացած իր նման գործարանատերերի ու ֆաբրիկաների (ակցիոներական ընկեր., սինդիկատներ), բոլոր քաղաքներում ու գյուղերում ունենում է խոշոր ու մանր առևտրականներ, ինչպես և ապրանքների խոշոր սլանեստներ:

Բացարձակ կերպով տիրապետելով տվյալ ապրանքին, այսինքն իր ձեռքն առնելով յերկրում արդյունաբերվող այդ ապրանքի մեծագուշտ մասը, նման խոշոր կապիտալիստը կամ

կապիտալիստների ընկերութիւնը հաստատուն գներ է նշանակում: Նույնիսկ գյուղական փոքրիկ մանրավաճառչնման դեպքում վոչ այլ ինչ է, յեթե վոչ այդ խոշոր կապիտալիստների գործակատսը. նրա ոգուտն ու յեկամուտը գյուղում իր ծախած ապրանքների վրա դրված փոքրիկ հավելումն է: Մյուս կողմից այդ ընկերութիւնն աշխատում է գնել գյուղում գտնված գյուղատնտեսական բոլոր մթերքները, որինսկ' հաց, յուղ, ձու, անասնապահութիւնից ստացված մթերքները, մրգեր, բանջարեղեններ, կաշի, բուրդ և այլն: Այս բոլորը նրանք կատարում են իրենց անհաշիվ միջնորդների, գործակալների միջոցով և, բացի այդ, հաստատում են գնումների մենաշնորհումներ, այսինքն՝ վորեւ խոշոր կապիտալիստ գնում, հավաքում է տվյալ շրջանի կամ յերկրի ամբողջ ձուն, մյուսը՝ բուրդը, յերբորդը՝ ցորենը, և այդպես անվերջ: Այդ պատճառով Ամերիկայում դուրս մեն քայլափոխում կպատահեք մարդկանց, վորոնց անվանում են նավթի արքա, յերկաթի արքա, ածուխի արքա, ձուտերի արքա, ձվերի արքա և այլն: Այսպես են անվանում այն մարդկանց, վորոնք վերոհիշյալ առարկաների առևտուրը մշտապես իրենց ձեռքն առնելով, վորոշում են նրանց գները:

Այստեղ՝ գործարաններից ու ֆաբրիկաներից ստացված ոգուտի մեծագուշտ մասը մտնում է կապիտալիստների սնդուկը, նույն սնդուկն է մտնում նաև գյուղատնտեսութիւնից ստացված յեկամուտի նշանակալից մասը:

Այդ ինչպես է լինում: Կապիտալիստի ձեռքին են գտնվում առևտուրը, ապրանքների պահեստները, առաքման և տեղափոխութեան միջոցները (նավեր, յերկաթուղիներ), և վերջապես նրանց ձեռքին են գյուղատնտեսական հում նյութերը մշակող գործարաններն ու ֆաբրիկաները:

Իհարկէ, այդ յերկրներում եւ գյուղացին ցանկանում է ազատագրվել կապիտալիստների լծից: Դրա համար նա միայն մեկ ճանապարհ ունի. դա գյուղական բոլոր տնտեսատերերի և գյուղացիների կոոպերատիվային միութիւն կազմակերպելն է, ինչպես, որինսկ' սպառողական, արտադրողական, արհեստագործական, գյուղատնտեսական և այլն, բայց այնտեղ, ուր

կապիտալն այնպիսի հսկայական ուժի յե հասել, ինչպես որինակ՝ Ամերիկայում, այնտեղ նման կազմակերպություններն ել հեշտությամբ ընկնում են կապիտալիստների ցանցի մեջ:

Նախապատերազմյան Ռուսաստանում քաղաքի և գյուղի միջև կապ հաստատողը մեծ մասամբ մասնավոր կապիտալն էր: Մեզ մոտ ել կապիտալիստների մի խմբակ իր ձեռքն եր առել մեծաքանակ առևտուրը, իսկ նրա միջոցով և մանրածախքի նշանակալի մասը:

Յեվ վորովհետև մեզ մոտ քաղաքի և գյուղի կապը չափազանց թույլ է (գյուղերը ցրված են, խճուղիներ և յերկաթուղիներ քիչ կան, շոգենավային հաղորդակցությունն անբավարար է, ապրանքը գյուղ է հասնում մեծ մասամբ ձիերի միջոցով), ուստի գյուղական խանութպանը ոգտվելով գյուղացիների անչափ կարիքից՝ տեր ու տնօրեն է դառնում գյուղում և ապրանքներին իր ցանկացած գինը դնում:

Յերբեմն ապառիկ ապրանք տալով նա վաշխառուական տոկոսներ է վերցնում, միաժամանակ կիսագնի վերցնելով գյուղատնտեսական մթերքները: Ծիշտ է, պատերազմից առաջ գեմստվոներն աշխատում էին վորևե ձևով կազմակերպել գյուղատնտեսական մեքենաների պահեստներ և գեթ չնչին չափով ոգնություն հասնել գյուղին, բայց այդ միանգամայն անգործ եր կռվելու մասնավոր կապիտալի դեմ:

Նախապատերազմյան գյուղում կոոպերացիան ել թույլ եր, այնպես վոր քաղաքի և գյուղի տնտեսական կապը հաստատողը դարձյալ մնում եր մասնավոր կապիտալը: Այսպիսով բանվորի և գյուղացու ամբողջ աշխատանքը գնում եր կապիտալիստների, գործարանատերերի և առևտրականների գրպանը:

Բայց այժմ գործարանների յեվ Փաբրիկաների մեծագույն մասը պետականացված է, խոշորագույն ապրանքային պահեստները գտնվում են պետություն ձեռքին, յեվ չտեսնված չափերով զարգանում են կոոպերացիայի զանազան տեսակները: Բայց յեվ այնպես, նոյնիսկ այժմ մասնավոր առևտրի նշանակությունը դեռնվա մեծ է:

Մ ա ս ն ա վ ո Ր
ա Ր Գ Յ Ո Ւ Ն Ա Ր Ե Ր Ո Ւ
Բ Յ Ո Ւ Ն Ե Վ Մ Ա Ս
Ն Ա Վ Ո Ր Վ Ո Ւ Ն
Տ Ո Ւ Ր:

Ներկայումս խոշոր արդյունաբերությունը (նավթի, մետաղի, մանածագործության) գտնվում է պետության ձեռքում: Ինչ վերաբերում է մանր արդյունաբերությանը, նամանավանդ տնայնաարհեստագործական, պետք է նկատել, վոր այժմ բավականին մեծ չափով դեռ նա գտնվում է մասնավորների ձեռքին: Այդ մասնավոր արդյունաբերությունը պետությունից կապալով է վերցրել մի շարք մանր գործարաններ ու Փաբրիկաներ: Չեռնարկությունների քանակի տեսակետից (գործարաններ, Փաբրիկաներ և արհեստանոցներ) թեթև և տնայնաարհեստագործական արդյունաբերությունը մեծամասնություն է կազմում: Այդ ձեռնարկությունների թիվը 1920 թ. չորս անգամ ավելի յեր խոշոր գործարանների և Փաբրիկաների թվից, բայց այնտեղ աշխատում էին արդյունաբերության մեջ զբաղված վարձովի բանվորների միայն մեկ տասերորդ մասը: Սակայն (և վոր գլխավորն է) հենց այդ մանր թեթև արդյունաբերությունն է ամենից ավելի մանր-գյուղացիական տնտեսության կարիքներին ծառայում: Նա մեծ մասամբ զբաղված է ուտելիղների, փայտեղների (հյուսնություն, սայլերի, փայտյա ամանեղների), մետաղի (զարբին և փականագործ) արտադրությամբ և կանեփի մշակությամբ ու հյուսվածքով (պարաններ ու թոկեր): Բավական է ասել, վոր 1922 թվին մասնավոր արդյունաբերությունը շուկա յեր հանել մոտ 400 միլ. ռ. (վոսկով) ապրանք, վորը կազմում է այդ տարվա ամբողջ արդյունաբերության մեկ յերրորդը:

Յեվ վորովհետև խոշոր գործարանների ու Փաբրիկաների աշխատանքը թուլացել եր, այդ պատճառով նրանց հաշվին մեծացել եր մանր-տնայնա-արհեստագործական արդյունաբերության նշանակությունը:

Նախապատերազմյան շրջանում այդ մանր-տնայնաարհեստագործական արդյունաբերությունը տալիս եր 730 միլ. ռուբլու մթերք, վորը կազմում եր ամբողջ արդյունաբերության մեկ վեցերորդը: Վորովհետև այդ մանր-տնայնագործական արդյունաբերությունը մեծ մասամբ հիմնված է գյուղա-

կան աշխատավորի շահագործման և շատ արժան աշխատանքի վրա, այդ պատճառով էլ նա շատ հաճախ իր ապրանքները ծախում է ավելի արժան գնով:

Այդ յերևույթը, իհարկե, ժամանակավոր է: Մեր խոշոր գործարաններն ու ֆաբրիկաներն արագորեն վերականգնվում են, նրանց արդյունաբերությունը մեծանում ու արժանանում: Կասկած չկա, վոր շատ մոտիկ ապագայում նրանք իրենց արժանի տեղը կգրավեն: Ինչ վերաբերում է հատավաճառ առևտրին, պետք է նկատել, վոր նա յեւ նշանակալից չափով գտնվում էր մասնավոր առևտրականների ձեռքին: 1924 թվի սկզբին Ս. Ս. Հ. Միություն 63 նահանգներում մասնավոր առևտրի թույլտվության 284 հազար դիմում է յեղել, կոոպերատիվներից 24 հազար, իսկ պետական ձեռնարկություններից 12 հազար: Զիշտ է, պետք է ինկատել ունենալ, վոր պետական առևտուր ասելով պիտի հասկանալ մեծաքանակ խոշոր պահեստները (խնդիրը պահեստների քանակի մեջ չի), մինչդեռ մասնավոր առևտուր ասելով պետք է հասկանանք մանրավաճառներին, կրպակատերերին ու «ծաքախներով» առեվտուր անողներին:

Մեզ մոտ մասնավոր մարդկանց պատկանող խանութներն առայժմ պետականից ավելի չեն: 1923 թվին Մոսկվայի նահանգում յուրաքանչյուր 100 առևտրական հիմնարկությունից 84-ը մասնավորներին էին (խանութներ), կոոպերատիվներին՝ 15, և պետական՝ 1:

Մասնավոր առևտուրն, իհարկե, առանձին նշանակություն ունի գյուղում:

Կոոպերացիան գյուղում վոչ միայն վաճառում է, այլ և գնում է. պարզ է, ուրեմն, վոր նա քաղաքի գործարանային մթերքները փոխանակում է գյուղատնտեսական մթերքների հետ:

Այդ տեսակետից կոոպերացիան առայժմ բավականին թույլ է: Սպառողական կոոպերացիան 1922 թվին մթերել էր 20 միլիոն փթից ավելի հաց, վուշ և կանեփ՝ 800 հազար փ., կաշի՝ 300 հազարից ավելի, միս՝ 45 հազ. փ., յուղ՝ 20 հազ. փ.: 1922 թվ. կոոպե-

րացիան արտասահման է արտահանել 11 միլիոն վոսկ. ուլերու ապրանք և ներմուծել է այնտեղից 6 միլ. ո. ապրանքից ավելի: Այստեղից արտահանել է վուշ, կանեփ (50 տոկ.). արտահանություն ամբողջ $\frac{1}{3}$ -ից ավելին կազմել է մորթեղենը ($36\frac{0}{100}$), դրա դիմաց արտասահմանից ներմուծվել են մետաղյա զանազան իրեր, գյուղատնտեսական մեքենաներ, հաստ կաշի, կենսամթերքներ և այլն (այն ժամանակ մեր յերկիրը կենսամթերքների մեծ կարիք ուներ):

Սպառողական կոոպերացիան այժմ լայնացնում է այն գործարանային տիպի ձեռնարկությունները, ուր պատրաստում է մեծ չափով ուտելիղեններ (պանիր, յուղ և այլն): 42 նահանգում սպառողական կոոպերացիան 1000-ից ավելի նման ձեռնարկություններ ունի: Նրանց մեջ աշխատում են 17 հազար բանվոր:

Սպառողական կոոպերացիան գյուղական կյանքում ավելի ու ավելի մեծ դեր է խաղում: Ներկայումս նա ստեղծում է սերմազտիչ կայաններ, բեղմնավորման կետեր, արհեստանոցներ և այլն և այլն:

Յեթե վերցնելու լինենք ստորին կոոպերացիան, կտեսնենք, վոր նրա շուրջը համախմբված են մոտ 3 միլիոն գյուղացիական տնտեսություններ: Նրանք բոլորը միասին 22.500 գյուղական միություններ և 30 հազար խանութներ ունեն: Սրան պետք է ավելացնել կրկին 300 յերկաթուղային սպառողական ընկերություն, զինվորական՝ մոտ 200, շրջանային միություններ՝ 48 և նահանգային՝ 87, այդ միությունների 502 բաժանմունքները (սրանց զուխն անցած Կենսամիությունը (Центросоюз) և Կենսամիությունը իր 100-ից ավելի բաժանմունքներով ու զբասնչակներով: Այս բոլոր առևտրական կազմակերպությունները, իհարկե, դեռևս հեռու յեն կատարյալ լինելուց: Վերջերս կոոպերացիայի վրա հատուկ ուշադրություն են դարձնում: Հետզհետե գյուղացիությունն ինքն ավելի և ավելի մեծ չափերով է կապվում կոոպերացիային և մտցնում նրա մեջ իր ուղղումները: Կոոպերացիայի բոլոր պակասություններն ու թերություններն ուղղելու միակ միջոցն այն կլինի,

վոր ամբողջ գյուղացիութիւնը մասնի նրա մեջ, ստեղծվի կանոնավոր և ճիշտ հաշվառում (կոոպերացիայի), ուղղվի նրա ամեն մի քայլը, վերացվեն գործին խանգարող ավելորդ կազմակերպութիւնները, վոչնչացվեն բոլոր վերադիր ծախքերը, և վարկի միջոցով կոոպերացիան մոտեցնելով գործարաններին ու ֆաբրիկաներին՝ ստեղծվի իրական, իսկական կապ քաղաքի բանվորների ու գյուղացու միջև:

Մասնավոր առևտրականի միջոցով այդ բանին հասնել չենք կարող: Մասնավոր առևտրականը կոոպերատիվից ավելի յե շահագրգռված ոգուտի խնդրով յեվ յայդ պատճառով նա գյուղացուն ձգտում է նորտացնել: Մինչդեռ կոոպերացիան, ընդհակառակը, շահագրգռված է գյուղացու առաջադիմութիւն, նրա տնտեսութիւնի բարեկարգման, ծաղկման վիճակով: Կոոպերացիայի միջոցով գյուղացին դիտում է աշխատանքի իսկական յեղբայրութիւն—համաշխարհային կոմունիզմին:

Գյուղն ու պե- Պետական արդյունաբերութիւնն իր ձեռքն տակաւ առգու- է առել բոլոր խոշոր գործարանային ձեռնար- ցաբերութիւնը: Կոթիւնները: Միայն նրանց մի փոքրիկ մասն է կապւում տվել կոոպերացիային և մասնավոր մարդկանց: Ստորե բերված տախտակը ցույց է տալիս խոշոր արդյունաբերութիւնի ծավալը:

Յուրաքանչյուր 100 արդյունաբերական ձեռնարկութիւն- նից և նրանց մեջ աշխատող 100 բանվորից պետական արդյու- նաբերութիւնն ընկնում է—

	ձեռնարկութ.	բանվոր.
Ինժեներա- շինարարական	85	98
Մետաքսի մշակում	71	95
Բամբակի »	45	95
Թղթի »	51	96
Վուշի »	34	85
Պղիգրաֆիակ. արտադրութիւն	50	90
Քիմիական »	45	88

Իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմի ժա- մանակ մեր արդյունաբերութիւնը խիստ կերպով կրճատվեց: 1913 թվ. արդյունաբերութիւնի ամբողջ արտադրութիւն ար- ժեքը հասնում էր 3 միլիարդ 700 միլիոն վոսկի ուրբու,

իսկ 1922 թվականին միայն մեկ միլիարդ ուրբու, այսինքն՝ 4 անգամ պակաս:

Ամենախիստ կրճատումն այդ տեսակետից տեղի ունեցավ 1920 թվին: Այն ժամանակ քարածուխն արտադրվում էր նա- խապատերազմյան քանակից չորս անգամ պակաս (այժմ յեր- կու անգամ), աղը—յերեք անգամ, չուգուն արտադրվում էր 40 անգամ քիչ, շոգեմեքենաներ—17 անգամ քիչ, գու թաններ—8 անգամ, գործվածքներ—20 անգամ և այլն:

Ապրանքային սովը հենց հետեվանք եր այն բանի, վոր նախապատերազմյան 20 արշին չլի փոխարեն 1920 թվին ար- տադրվում էր միայն մեկ արշին, մեկ փութ մեխի փոխարեն շին- վում էր մեկ ֆունտ: Սակայն 1921 թվականից պետական ար- դյունաբերութիւնն սկսում է ավելի ևս ուժեղանալ: 1924— 25 թվին արդյունաբերութիւնն արդեն նախապատերազմյան գներով հաշված պատրաստում է միլիարդ ու կես ուրբու մթերե- ներ: Ստորե բերված աղյուսակը պարզ կերպով ցույց է տա- լիս, թե մեզ մոտ 1913 թվից սկսած արդյունաբերութիւնն ու գյուղատնտեսութիւնն ինչպես են աստիճանաբար ընկել ու ապա կամաց-կամաց բարձրացել:

Նախապատերազմյան գներով հաշված (միլիոն վոսկի ուրբով.)

	Խոշոր և միջին	Տնայնա-ար- ցաբերութիւն	Ընդամենը	Գյուղատնտես- ական (ընդհ. արդ.)
1913 թ.	3721	730	4451	6639
1921 »	669	260	926	3535
1922 »	1056	415	1471	3931
1923 »	1239	500	1749	4094

ՊԵՏԱԿԱՆ ՍՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ, ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՂ.

Այսպիսով մեր յերկրում գյուղին անհրաժեշտ գործարա- նային մթերքների գլխավոր արտադրողը հանդիսանում է պե- տութիւնը: Դրա հետեանքով ել ամբողջ մեծաքանակ առևտուրը

գտնվում է պետութեան ձեռքում: 1924 թվին կազմակերպվեց ներքին առևտրի կոմիսսարիատ, վոր ղեկավարում է առևտուրը, հետևում է գներին, շուկայի փոփոխություններին և այն բանին, վոր իր վորակի ու գնի կողմից գյուղին մատչելի ապրանք հասնի, և մասնավոր առևտրականին այնտեղ փոխարինեն պետությունն ու կոոպերացիան: Նահանգները նույնպես կազմակերպեցին նման առևտրական կազմակերպություններ, ինչպես, որինակ, հահանգային պետություններ, վորոնք նույն աշխատանքը կատարում են միայն նահանգի մասշտաբով: Սակայն մասնավոր առևտրի ասպարիզում պետությունը մինչև այսօր չի կարողացել այնպես ամրանալ, ինչպես ամրացել է մասնավոր առևտրականը: Այստեղ դեռևս պետք է բավականին լուրջ ու տևական կռիվ մղել: Մենք դեռ յերկար ժամանակ չենք կարողանա մասնավոր առևտրականին ամբողջապես հեռացնել հրապարակից ու ամբողջ գործը հանձնել կոոպերատիվին:

Բաց և այնպես կոոպերացիան պետք է աճի և զարգանա վոչ միայն նրա համար, վոր փոխարինե մասնավոր առևտրականին, այլ և ապրանքը արժան ծախելով, խանգարե մասնավոր առևտրականին ու թույլ չտա ապրանքի գնից ավելի փող վերցնել:

Մասնավոր մանրավաճառը դեռ յերկար ժամանակ կարող է գոյություն ունենալ, սակայն պետք է հասնել այն բանին, վոր այնտեղ, ուր կա 2-3 մասնավոր խանութ, գոնե լինի նրանցից արժան վաճառող մեկ կոոպերատիվ: Այդ բանը պետք է անել այնպես, վոր գյուղացին զգա տարբերությունը, իմանա, վոր պետության և կոոպերացիայի միջոցով ստացված ապրանքների վորակով լավն են ու գնի կողմից ել արժան: Իսկ ամենազլխավորն այն է, վոր գյուղացիությունը հասկանա, վոր պետական ու կոոպերատիվային առևտրի ոգուտը վոչ թե զնում է հաստացնելու առանձին մարդկանց զրպանները, այլ գնում է հարստացնելու բանվորա-գյուղացիական խորհրդային հանրապետությունների պետությունը:

(Ըստ Յարոսլավսկու)
Թարգմ. Գ. Գրիգ

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Ի՞նչ է քաղաքը և ի՞նչով է տարբերվում գյուղից: Ի՞նչպես առաջացավ գյուղը:
2. Ի՞նչ աշխատանքներ են կատարվում գյուղում և ի՞նչ աշխատանքներ քաղաքում:
3. Ի՞նչ է բնական տնտեսությունը և ի՞նչ՝ ապրանքային-փողային տնտեսությունը:
4. Ի՞նչպիսի տնտեսություն է ներկայումս մեր գյուղում:
5. Կ՞ի Հայաստանում այժմ տնային փակ տնտեսություն:
6. Գյուղի և քաղաքի հարաբերությունը տնային փակ տնտեսության և ապրանքային տնտեսության ժամանակ:
7. Ի՞նչպես առաջացավ քաղաքը, վաճառանոցը և դրամը:
8. Կ՞ան քաղաքներ, վորոնք շատ քիչ են տարբերվում գյուղերից և ինչո՞ւ:
9. Ի՞նչ նոր առաջացած քաղաքներ կան Հայաստանում:
10. Գյուղի և քաղաքի սերտ կապի նշանակությունը խորհրդային իրավակարգում:
11. Ի՞նչ է տալիս գյուղը քաղաքին և քաղաքը գյուղին:
12. Ո՞ւմ ձեռքին է գտնվում առևտուրն ու արդյունաբերությունը բուրժուական յերկրներում: Մասնավոր առևտրի և արդյունաբերությունը բնույթը:
13. Ո՞ւմ ձեռքին են գտնվում առևտուրն ու արդյունաբերությունը նրա խորհրդային Միության մեջ:
14. Մասնավոր առևտուրն ու արդյունաբերությունը խորհրդային Միության մեջ ի՞նչ տեղ են բռնում:
15. Կոոպերացիան խորհրդային իրավակարգում:
16. Ինչո՞վ է տարբերվում խորհրդային կոոպերացիան բուրժուական յերկրի կոոպերացիայից:
17. Պետական առևտուր և արդյունաբերություն — Արտաքին Առևտրի կոմիսսարիատ:
18. Ո՞վ է կանոնավորում և կարգադրում արտաքին և ներքին առևտուրը խորհրդային Հայաստանում:

ՀՀ Ազգային գրադարան



NL0185258

12. 465